

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին, շաբաթ.—Այսօր՝ մի քանի ամիս առաջ Վեհափառ Հայրապետի հրամանով Հնդկաստան հովվական այցելության մեկնած Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադոյանը վերադարձավ Մայր Աթոռ:

*
* *

Մայիսի 2-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը:

*
* *

Մայիսի 3-ին, երկուշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, տ. Մասիս վրդ. Գալստյանը մեկնում է Անգլիա՝ ուսանելու Քենտրբերիի Էլիզտ կոլեջում:

*
* *

Մայիսի 9-ին, կիրակի.—(Կարմիր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Արիւն մարտիրոսաց սերմն եկեղեցւոյ» բնաբանով:

*
* *

Մայիսի 13-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն ժողովում Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստների թանգարանի վարիչ նշանակվեց տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Մայիսի 16-ին, կիրակի.—Տօն երևման ս. խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եւ ապա երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս» (Մատթ. ԻԴ 30) բնաբանով:

*
* *

Մայիսի 18-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեռիյանը, որը զեկուցեց Մայր Աթոռի 1975 թվականի բյուջեի կատարման և 1976 թվականի նոր բյուջեի նախահաշվի մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը հաստատում է Մայր Աթոռի 1975 թվականի բյուջեի կատարողականը և հավանություն տալիս 1976 թվականի բյուջեի նախահաշվին:

Նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, որը զեկուցեց 1976 թվականին Մայր Աթոռում և նրա շրջանակից դուրս կատարվող շինարարական աշխատանքների մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդը, մտքերի փոխանակությունից հետո, վերոհիշյալ զեկուցագրերի առթիվ արձանագրում է իր գնահատանքի խոսքը կատարված աշխատանքների մասին:

*
* *

Մայիսի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչական և ուսուցչական կազմի հետ միասին, մեկօրյա ուխտագնացության են մեկնում ս. Գեղարդ:

*
* *

Մայիսի 21-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետն այցելում է ս. Գեղարդ վանք:

Նորին Սրբությանն ընկերակցում են տ. Հուսիկ և տ. Արսեն սրբազանները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և Հակոբ սրկ. Խաչատրյանը:

Ս. Գեղարդ վանքի մեծ դարբասի առաջ Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում վանահայր տ. Վահան եպս. Տերյանը՝ շրջապատված տեղի վանական միաբանության անդամներով:

Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է եկեղեցի՝ Իր ուխտն ու երկրպագությունը կատարելու:

Այնուհետև Նորին Սրբությունը հետաքրքրվում է ս. Գեղարդ վանքի շինարարական, բարեկարգման հարցերով:

*
* *

Մայիսի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի որք հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե 10) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «Ցիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

*
* *

Մայիսի 24-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվում են 1975—1976 ուսումնական տարվա ամավերջի քննությունները:

*
* *

Մայիսի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Բյուրականի հայրապետական ամառանոցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները ծանոթանում են հայրապետական ամառանոցի հարկաբաժիններին և դրանց կահավորմանը:

*
* *

Մայիսի 27-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի. Ցիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սուլ ի ս. Էջմիածին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և քարոզում «Ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա: Եւ եղև յօրհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ ի նոցանէ, և վերանայր յերկինս» (Ղուկ. ԻԴ 52) բնաբանով:

Ս. պատարագի ավարտին Իշման ս. սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ Մայր Աթոռի Սսից Էջմիածին տեղափոխվելուն:

*
* *

Մայիսի 29-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 12-ին, Մայր Աթոռ այցելեց ՍՍՀՄ-ում Ավստրիայի արտակարգ լիազոր-դեսպան Հայնրիխ Ստանդենատը՝ իր տիկնոջ հետ:

Հարգելի հյուրը եղավ Մայր տաճարում, եկեղեցական արվեստների թանգարանում:

Այնուհետև Վեհարանում Հայոց Հայրապետն ընդունեց հարգարժան հյուրին ու նրա տիկնոջը:

Հայոց Հայրապետի և Ավստրիայի մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

Պրն. դեսպանը և նրա հարգելի կինը հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին լավագույն տպավորություններով:

*
* *

Մայիսի 30-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ» շարականի բնաբանով: